Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ

Խաղաղության Կորպուս Հայաստան

# Խաղաղության Կորպուսի ծրագրի ազդեցության գնահատում

2008 թ. սեպտեմբերից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում Քաղաքացիական Զարգացման և Համագործակցության Հիմնադրամը (ՔԶՀՀ) Խաղաղության կորպուսի խնդրանքով անցկացրեց Խաղաղության կորպուսի (ԽԿ) աղդեցության գնահատում: Այս հետազոտության նպատակն էր արձանագրել Խաղաղության Կորպուսի կամավորների ունեցած ազդեցությունը հյուրընկալող երկրի այն բնակիչների վրա, որոնց հետ կամավորները կենակցել և աշխատել են:

Խաղաղության կորպուսը իր գործունեությունը ծավալել է 1961թ.-ից՝ իր առջև դնելով աշխարհում խաղաղության և բարեկամական հարաբերությունների հաստատման առաջնային նպատակը ամերիկացի կամավորների մատուցած ծառայությունների շնորհիվ: Մինչ օրս 195 000 կամավորներ իրենց ներդրումն են ունեցել այս նպատակի իրականացմանը ավելի քան 139 երկրներում, որոնց թվում է նաև Հայաստանը: Խաղաղության կորպուսի հայաստանյան գրասենյակի համար սահմանված հիմնական նպատակներն են աջակցել հետաքրքրված երկրի բնակչությանը՝ բավարարելով վերապատրաստված տղամարդկանց և կանանց նկատմամբ նրանց ունեցած պահանջները, ինչպես նաև նպաստել հյուրընկալող երկրի բնակչությանը ավելի լավ պատկերացում կազմել ամերիկյան ժողովրդի մասին:

ԽԿ-ի այս նպատակների, ինչպես նաև կամավորների աշխատանքի արդյունավետության ու նրանց ունեցած ազդեցության գնահատման համար ԽԿ-ն որոշեց անցկացնել Ազդեցության Գնահատում, որը կրում էր փորձնական բնույթ :Ի դեպ նման գնահատում անցկացվել է երեք երկրներում՝ Հայաստանում, Դոմինիկյան Հանրապետությունում և Մալիիում: Սկզբնական շրջանում ԽԿ- ն ծրագրել էր հրավիրել մասնագետ գնահատումն անցկացնելու համար, սակայն ՔԶՀՀ- ի տնօրենի հետ այս հարցի շուրջ երկար զրուցելուց հետո ԽԿ- ի ներկայացուցիչները եկան այն եզրակացության, որ թիմային աշխատանքն ավելի ընդգրկուն և արդյունավետ արդյունքների կհանգեցնի:

ՔԶՀՀ-ն ծառայություններ, հետազոտություններ և խորհրդատվություններ տրամադրող առաջատար կազմակերպություններից մեկն է, որն ապահովում է իր ծառայությունների, դասընթացների, հետազոտությունների և խորհրդատվությունների որակն ու արդյունավետությունը և ի սկզբանե կոչված է խթանելու քաղաքացիական հասարակության զարգացմանը:

ՔԶՀՀ-ն Հայաստանում Խաղաղության կորպուսի ազդեցության գնահատումը կատարեց տարբեր վայրերում ԽԿ կամավորների հետ ապրած և աշխատած անձանց հետ անցկացրած հարցազրույցների միջոցով: Հարցազրույցներն անցկացվել են նաև

հյուրընկալող ընտանիքների, ուսուցիչ-գործընկերների, դպրոցների կազմակերպչական ներկայացուցիչների, ուսանողների, ԽԿ կամավորների, նրանց հետ աշխատած, փոխանակման ծրագրերն անցած անձանց հետ: Հարկ է նշել, որ հարցումների համար նախապես ընտրվել էին Լոռու, Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերը: Այսպիսով, հարցվածների 83%-ը հաստատեց, որ կամավորներն իրոք բավարարում են հյուրընկալող երկրի կարիքները: Պարզվեց նաև, որ զգալի փոփոխություններ են տեղի ունեցել այն մարդկանց բնավորության և արժեքների ընդհանուր համակարգում, որոնք ապրել և աշխատել են ԽԿ կամավորների հետ, հարցվածների 93% -ի մոտ արձանագրվել է փոփոխություն կապված քննադատական մտածելակերպի, ստեղծագործական ունակությունների, հանդուրժողականության, ինչպես նաև աշխատանքային ոճի հետ: Այն հարցին, թե արդյոք ԽԿ կամավորները նպաստել են ամերիկացիների մասին ունեցած կարծիքի փոփոխմանը, հարցվածների 70% -ի տված պատասխանը դրական շարժ է արձանագրել, 25% -ը անդրդվելի է մնացել, մինչդեռ հյուրընկալող ընտանիքների 5% - ը ավելի բացասական կարծիք է կազմել ամերիկացիների մասին ԽԿ կամավորների հետ կենակցելուց հետո: Հատկանշական է նաև, որ հարցվածների 81% - ը ցանկություն է հայտնել հետագայում ԽԿ կամավորների հետ կենակցելու կամ աշխատելու մասին:

ՔԶՀՀ-ի հետազոտության առանձնահատկությունը նաև բնորոշվում է նրանով, որ այն ներկայացնում է իր առաջարկությունները ԽԿ-ի գործունեության այս կամ այն ոլորտում հնարավոր բարեփոխումներ անցկացնելու հետ կապված: Ընդհանուր առմամբ այդ բարեփոխումները վերաբերում են կամավորների՝ անձնական և միջմշակութային ունակությունների զարգացմանը: Հետազոտությունը կարևորեց այն էական խնդիրը, որ ծրագրային ռազմավարության շրջանակներում անհրաժեշտ է այնպիսի մոտեցումներ մշակել, որոնց շնորհիվ ԽԿ կամավորների գործունեության առաջ բերած դրական փոփոխությունների հետևանքները հնարավորինս երկարատև բնույթ կրեն: ԽԿ հայաստանյան գրասենյակը կարիք ունի բարեփոխումներ կատարել նաև անգլերեն լեզվի դպրոցական դասագրքերի և մեթոդաբանության ոլորտում, ինչի մասին հաստատել են հետազոտության ընթացքում հարցված թե՛ ԽԿ կամավորները և թե՛ հայաստանյան բնակչությունը:

Ազդեցության Գնահատման արդյունքում ՔԶՀՀ թիմը առանձնացրել է ԽԿ կամավորների մի շարք առանձնահատուկ գծեր, որոնք թույլ կտան վերջիններիս իրենց գործունեության ընթացքում հասնել առավելագույն հաջողության: Ընդ որում դրանք առաջին հերթին վերաբերում են նրանց մասնագիտական ունակություններին, բնավորության որոշ գծերին, մշակութային փոփոխությունների պատրաստ լինելու կարողությանը: Սակայն պետք է գիտակցել, որ արդյունավետ միջմշակութային հաղորդակցման կայացման համար անհրաժեշտ է , որպեսզի հյուրընկալող կողմն էլ իր հերթին բավարարի ԽԿ կամավորների պահանջները: Ուստի ՔԶՀՀ-ն ներկայացնում է որոշակի պահանջներ, որոնք առաջադրվում են հյուրընկալող հաստատությանը և հյուրընկալող ընտանիքին և սահմանված են հնարավորինս նպաստելու երկու կողմերի միջև լիարժեք փոխհասկացվածության և համագործակցության կայացմանը:

Ազդեցության գնահատման պատկերն ավելի համապարփակ ներկայացնելու համար ՔԶՀՀ- ն տրամադրեց նաև հարցազրույցների արձանագրությունների թարգմանությունն ու դրանց փորձարկումը: Ի մի բերելով կուտակած տեղեկատվությունը՝ ՔԶՀՀ-ն ներկայցրեց վերլուծական հաշվետվություն, որը ներառում էր հետազոտության արդյունքներն ու առաջարկությունները: Այս գնահատումը կարևորվում է նրանով, որ այն հնարավորություն

է տալիս Խաղաղության կորպուսին Հայաստանի համար սահմանված նպատակների շրջանակներում պարզել, թե ԽԿ հայաստանյան գրասենյակը ինչքանով է բավարարում հյուրընկալող երկրի կարիքները և ինչքանով նպաստում այդ երկրի բնակչության՝ ամերիկյան ժողովրդի վերաբերյալ ունեցած պատկերացման ընդլայնմանը: Ավելին, այն թույլ է տալիս ԽԿ-ին ամբողջական պատկեր կազմել իր ծրագրերի արդյունավետության վերաբերյալ, ըստ որի անհրաժեշտության դեպքում բարեփոխումներ կկատարվեն այն ոլորտներում, որոնք դրա կարիքը ունեն:

Այսպիսով, Խաղաղության կորպուսը ծրագրեց այս փորձնական աշխաբանքները աչքի անցկացնելուց հետո անդրադառնալ գնահատման արդյունքներին և գնահատման այդ մեթոդներն ու ստացված տեղեկատվությունը կիրառել նաև այլ երկրներում:

Խաղաղության կորպուսի ղեկավարությունը շատ բարձր գնահատեց ՔՁՀՀ- ի վերլուծական հաշվետվությունը և ընդհանուր առմամբ ՔՁՀՀ հետազոտական թիմի տքնաջան աշխատանքը մասնագիտական ունակությունների և կատարված աշխատանքի կարևորության առումով: Հայաստանյան Խաղաղության կորպուսի տնօրեն Լի Լեսին, արտահայտելով իր կարծիքը, նշել է. □Ես միանգամայն տպավորված եմ, թե ինչպիսի մանրակրկտությամբ և որակով է կատարվել հաշվետվությունը: Այս գնահատման շրջանակներում ՔՁՀՀ- ի հետ համագործակցելը ուղղակի հաճույք էր: Շնորհակալություն ձեր պրոֆեսիոնալիզմի և կատարված բարձրորակ աշխատանքի համար□:

Այս խոսքերը, անշուշտ, շատ կարևոր են ՔՁՀՀ – ի թիմի համար և խրախուսում են նրանց դիմել նորանոր նախաձեռնությունների: